ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Նիաստն արձանագրում է աշխատակազմի քարտուղար Արա Սուքիասյանը:

Նիստը վարում է Արթիկ համայնքի ղեկավար՝ Անանիկ Ոսկանյանը:

Նիստին ներկա էին ավագանու 17 /տասնյոթ/ անդամներ, բացակայում էին ավագանու 10 /տասը/ անդամներ:

Նիստին մասնակցում են Արթիկ համայնքի ավագանու 17 /տասնյոթ/ անդամներ՝ Անանիկ Ոսկանյանը, Գյուլվարդ Թովմասյանը, Ռոման Մարտիրոսյանը, Արմինե Աղրամանյանը, Արտյոմ Չարչյանը, Էմիլ Գևորգյանը, Վարդուհի Հովհաննիսյանը, Մանուկ Գևորգյանը, Արտակ Հարությունյանը, Հովհաննես Սահակյանը, Գայանե Մինասյանը, Ոսկան Վարդանյանը, Մուշեղ Մկրտչյանը, Մեսրոպ Վարագյանը և Ժաննա Ասատրյանը:

Նիստին ներկա էին նաև համայնքի ղեկավարի տեղակալներ Վարդան Մակեյանը աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Արկադի Թադևոսյանը և այլ աշխատակիցներ:

Նիստի օրակարգ ներկայացվելուց հետո, հետևյալ օրակարգը դրվեց քվեարկության և հաստատվեց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 85-Ն որոշմամբ ընդունված կանոնակարգի 107-րդ կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել նիստի հետևյալ օրակարգը

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից սուբվենցիայի ստացման ծրագրային հայտերը համաձայնություն տալու մասին:

Ավագանու անդամներ՝

Կողմ (16)	**Դեմ (1)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան Անանիկ	Տոնոյան Արման	
Թովմասյան Գյուլվարդ		
Մարտիրոսյան Ռոման		
Աղրամանյան Արմինե		
Չարչյան Արտյոմ		
Գևորգյան Էմիլ		
Հովհաննիսյան Վարդուհի		
Գևորգյան Մանուկ		
Հարությունյան Արտակ		
Սահակյան Հովհաննես		
Մինասյան Գայանե		
Ռափյան Արտակ		
Վարդանյան Ոսկան		
Մկրտչյան Մուշեղ		
Վարագյան Մեսրոպ		
Ասատրյան Ժաննա		

Օրակարգային հարցը ներկայացրեց Արթիկի համայնքապետարանի զարգացման, ծրագրերի, տուրիզմի և արտաքին կապերի բաժնի պետ Մ.Մովսիսյանը: Նա ներկայացրեց հարց՝ հետևյալ վերնագրով Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Արթիկ համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից սուբվենցիայի ստացման ծրագրային

հայտերը համաձայնություն տալու մասին: Հարցը ներկայացնողը մանրամասն ներկայացրեց, թե որ հայտերի փաթեթների մասին է խոսքը: Դրանք են՝

1. Արթիկ համայնքի 6 բնակավայրերի ոռոգման համակարգի կառուցում՝

Գետափ բնակավայրի 4-րդ, Գեղանիստ բնակավայրի 2-րդ, 9-րդ, 10-րդ և 12-րդ փողոցների, Լուսակերտ, Մեղրաշեն, Սպանդարյան, Սարալանջ, բնակավայրեր

2.Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի կարիքների համար աղբատար մեքենաների և աղբամանների ձեռքբերում

3.Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի Բաղրամյան փողոցի ասֆալտապատում և Գարեգին Նժդեհ փողոցի վերջնամասի մայթերի կառուցում

4.Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի <<Թիվ 2 մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, Փոքր Մանթաշ, Մեծ Մանթաշ և Հառիճ բնակավայրերի <<Նախադպրոցական ուսումնական հաստատությունների>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների շենքերի հիմնանորոգում

5.Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի 3 համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և Անուշավան բնակավայրի մշակույթի տան դահլիճի վերանորոգման աշխատանքներ

Արթիկ քաղաքի Բաղրամյան 9/1 հասցեում գտնվող <<Գեղարվեստի դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության երկհարկանի շենքի և շենքի տանիքի հիմնանորոգում, Անկախության 20 հասցեում գտնվող <<Միսաք Մանուշյանի անվան գեղագիտական դաստիրակության կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության ջեռուցման համակարգի անցկացում, Անկախության 42 հասցեում գտնող <<Արթիկ մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի տանիքի ծածկի հիմնանորոգում և Անուշավան բնակավայրի 1-ին փողոց 2 հասցեում <<Անուշավանի Սուրեն Սոսյանի անվան արվեստի և սպորտդպրոցի >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի կոսմետիկ վերանորոգում:

6.Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի 26 բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում

Արթիկ քաղաքի 26 բազմաբնակարան շենքերի՝ Լմբատ 1.44, Լմբատ 1.24, Լմբատ 1.7, Լմբատ 1.11, Լմբատ 1.12 , Լմբատ 1.14 , Լմբատ 1.10 , Լմբատ 1.6, Լմբատ 1.35, Լմբատ 1.43, Լմբատ 2.1, Լմբատ 2.26, Լմբատ 2.27, Լմբատ 2.5, Լմբատ 2.8, Լմբատ 2.14, Բաղրամյան 3,

Տոնականյան 4, Տոնականյան 2, Տոնականյան 3,Սասունցի Դավիթ 19, Սասունցի Դավիթ 5, Շինարարների 5, Շինարարների 3, Սասունցի Դավիթ 21, Անկախության 15 տանիքներ:

8. Արթիկ համայնքի 14 բնակավայրերի ներհամայնքային ճանապարհների տուֆ քարով սալապատում:

Արթիկ համայնքի, Արթիկ քաղաքի Կամոյի, Բաբաջանյան, Բաբաջանյան փողոցի 2-նրբանցք, Գրիգոր Զոհրապ, Զորավար Անդրանիկ, Ղուկասյան, Սունդուկյան, Մաշտոց, Գրիգոր Լուսավորիչի նրբանցք, Հակոբյան, Դեմիրճյան, Շիրազի,Դուրյան, Անկախության փողոց 6-րդ նրբանցք, Շիրազի, թիվ 3-րդ գերեզմանատուն տանող ճանապարհի, Արթիկ համայնքի Հովտաշեն բնակավայրի 3-րդ, Անուշավան բնակավայրի 6-րդ և 9-րդ, Սարատակ բնակավայրի 1-ին փողոց 1-ին նրբանցք, 1-ին փողոց 3-րդ նրբանցք, 1-ին փողոց 6-րդ նրբանցք և 6-րդ, Վարդաքար բնակավայրի 4-րդ և 5-րդ, Նահապետավան բնակավայրի 9-րդ, Տուֆաշեն բնակավայրի 3-րդ, Սարալանջ բնակավայրի 5-րդ և 6-րդ, Սպանդարյան բնակավայրի 12-րդ վերջնամաս, Նոր Կյանք բնակավայրի 4-րդ, Հոռոմ բնակավայրի 3-րդ և 11-րդ, Փանիկ բնակավայրի 9-րդ, 10-րդ և 12-րդ, Լեռնակերտ բնակավայրի 4-րդ, 6-րդ, 7-րդ և 5-րդ փողոց 2-րդ նրբանցք և Պեմզաշեն բնակավայրի 8-րդ և 9-րդ փողոցներ:

9. Արթիկ համայնքի Գեղանիստ և Արևշատ բնակավայրերի գազատարի ներքին ցանցի կառուցում

Գեղանիստ բնակավայրի՝ 9-րդ փողոց 1-ին նրբանցք, 1-ին փողոց 7-րդ նրբանցք 6-րդ փակուղի, 2-րդ փողոց 1-ին նրբանցք, 8-րդ փողոց 2-րդ նրբանցք, 12-րդ փողոց 1-ին նրբանցք 3-րդ փակուղի և Արևշատ բնակավայրի՝ 4-րդ փողոց 2-րդ նրբանցք, 6-րդ փողոց 1-ին նրբանցք, 1-ին փողոց 2-րդ նրբանցք, 1-ին փողոց 3-րդ նրբանցք, 1-ին փողոց 4-րդ նրբանցք, 1-ին փողոց 7-րդ փակուղի, 6-րդ փողոց 4-րդ փակուղի, 6-րդ փողոց 3-րդ փակուղի, 8-րդ և 3-րդ փողոցներ:

Ավագանու անդամները քննարկեցին ներկայացված ծրագրերը, հարցերին պատասխաններ տվեցին համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյանը և համայնքապետարանի զարգացման, ծրագրերի, տուրիզմի և արտաքին կապերի բաժնի պետ Մ.Մովսիսյանը:

Քննարկումից հետո նախագիծը դրվեց քվեարկության և ընդունվեց 17 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով:

Ավագանու անդամներ՝

Կողմ (16)	**Դեմ (1)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան Անանիկ	Տոնոյան Արման	
Թովմասյան Գյուլվարդ		
Մարտիրոսյան Ռոման		
Աղրամանյան Արմինե		
Չարչյան Արտյոմ		
Գևորգյան Էմիլ		
Հովհաննիսյան Վարդուհի		
Գևորգյան Մանուկ		
Հարությունյան Արտակ		
Սահակյան Հովհաննես		
Մինասյան Գայանե		
Ռափյան Արտակ		
Վարդանյան Ոսկան		
Մկրտչյան Մուշեղ		
Վարագյան Մեսրոպ		
Ասատրյան Ժաննա		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնքի ղեկավար
15 նոյեմբեր 2024 թվական